չայիր, Ղույուլէր, Թուրհալ, Էյնէպազար, Ամասիա, Մարսուանու վանք, Մարսուան, Պայաթգիւղ, Ղավզա, Ալահի տէրէսի, դարձեալ Մարսուան, Անիգեղ, դարձեալ Ամասիա, Էյնէպազար, Թուրհալ, Զիլէ, Սուլուխպէլ, Գազիմէզարի, դարձեալ Էյնէպազար, և Վարազ (Թղ. 29բ-45բ)։

Յունուար 17ին կը մեկնի Եւդոկիայէն ու հանդիպելով Էնկիչէհր, Զամլիպէլ, Սեւաստ, Ուլաշ, Տէլիկտաշ, Ղանղալ, Ալհախան, Քէհիայքոյ, Հէքիմխան, Աղփինար, Հասանպատրըղ, Մալաթիա, Քոմուրխան, Ծովք, Սամլու աղբիւր, Յունուար 30ին կը հասնի Ջնքուշի վանքը, ուր կը մնայ մինչև փետրուար 18 (Թղ. 45բ-47բ)։

Փետր. 18ին կը մեկնի Ջնքուշի վանքէն՝ ու հանդիպելով Կավուրկապան, Հապուման, Ջերմուկ, Թլէթնակ, Ակըլիճաքի մաղառան, Ալիփինառ, փետր. 25ին կը մտնէ Համիթ, ուր կը մնայ մինչև Յունիս 3 (Թղ. 47բ-52ա)։

Յունիս 3ին կը մեկնի Համիթէն. կը հանդիպի Ալիփինառ, Շխքէնտ, Ակըլ, Հէրձնի, Արղնիի Բարձրահայեաց վանքը, Տլընտրէ, Ջերմուկ, Հապուման և Յունիս 12ին կը հասնի Ջնքուշ, ուր կը մնայ մինչև Սեպտ. 4, մերթ երթալով Ջընքուշի վանքը և շրջակայքը՝ Վերի Ատիչ, Ներքի Ատիչ, Ծովք, Սիյէքէլէփ, Քէյտան, Սամլու, Հապուման (Թղ. 52ա-55բ)։

Սեպտ. 4ին կը մեկնի Ջնքուշի վանքէն. կը հանդիպի Ագրակ, Պօղազ, Թառմալ, Կէյիկլթէփա, Շլպէ, Ալիփինառ և Սեպտ. 5ին կը հասնի Համիթ (Թղ. 55բ), ուր կը մնայ մինչև Հոկտ. 13 (Թղ. 55բ-57ա)։

Հոկտ. 13ին կը մեկնի Համիթէն. կը հանդիպի, Ալիփինառ, Սախարտիկլին, Շխլար, Սախալտութան, Տուտէ, եւ Հոկտ. 18ին կը հասնի Ջնքուշի վանքը և հոն կը մնայ մինչև **1685** Մայիս 6, երբեմն երթալով Ջնքուշ և շրջակաները՝ Հապուման և Ս. Ոհանէս ուխտատեղին (Թղ. 57ա-65բ)։

Մայիս 6ին կը մեկնի Ջնքուշի վանքէն. կը հանդիպի Պէհրմազու դաշտը, Կարմրի, Սօրսրու վանք, Հարսէք, Բերդակ, Ջմշկածակի դէմ, Ջմշկածակոյ կարմունճ, Տուղունըռպըտու խան, Վարդենեկ, Խասկալու աղբիւր, Հողեսու գլուխ, Ինճէչայիր, Կապանները, Քամախոյ հանդէպ, Ջարուխտուղի, Պօղազ, Թիլն աւանայ հանդէպ, Եզնկան և շրջակայքի Տիրաշէնի և Ս. Լուսաւորչի վանքերը։ Մայիս 25ին կը չարունակէ ճամբան Եզնկանէն ու հանդիպելով Ջիպինճէ, Դիֆեկա, Կօթերու կարմունճ, Արտուճըլըղ, Ջիթկէտուկ, Նարտվան, Ճի-